

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2009 թվականի հունիսի 16-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

**Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝**

<b>Լիլիթ Ասատրյան</b>	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
<b>Սողոմոնյան Սյուզաննա, Կարեն Զառոյանի լիազոր ներկայացուցիչ</b>	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
<b>Արմաղանյան Զարուհի, Լիա Խաչատրյանի լիազոր ներկայացուցիչ</b>	«Զարգացում և ինտեգրացիա» ՀԿ
<b>Մաիլյան Նարինե</b>	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
<b>Մովսիսյան Կարինե</b>	«Գործիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
<b>Ոսկանյան Արման</b>	«Տավուշի զարգացման» ՀԿ
<b>Աբրահամյան Թամարա, Անդրանիկ Վերանյանի լիազոր ներկայացուցիչ</b>	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
<b>Տեր-Հովակիմյան Ալեքսանդր</b>	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
<b>Ենգիբարյան Վիկտոր</b>	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
<b>Միքայելյան Շիրակ</b>	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ

**Նիստից բացակայում էին՝**

<b>Ղազարյան Տոնական</b>	«Շենիկ» ՋՕԸ
<b>Շահինյան Պողոս</b>	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
<b>Հովհաննիսյան Միհրան</b>	«Եղվարդ» ՋՕԸ
<b>Նազարյան Հազարապետ</b>	«Եղեգնաձոր» ՋՕԸ
<b>Համբարձումյան Սասուն</b>	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ

**Նիստին մասնակցում էին նաև՝**

<b>Արա Հովսեփյան</b>	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<b>Վիկտորյա Գրիգորյան</b>	ՇԽ օգնական
<b>Ավագյան Ռուզաննա</b>	Մախարովի անվ. մարդու իրավունքների կենտրոն ՀԿ
<b>Սեպրոն Աղիբեկյան</b>	«Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոն
<b>Սարգիս Մեղրակյան</b>	«Ֆերմերային շարժում» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև ՋԼՄ ներկայացուցիչներ:

Համաձայն ՇԽ Կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբբենական կարգի)՝ նիստը նախագահում էր ՇԽ անդամ Ալեքսանդր Տեր-Հովակիմյանը:

Նախագահողն առաջարկեց հաստատել նախօրոք ներկայացված օրակարգը: Օրակարգի վերաբերյալ եղան մի շարք առաջարկություններ, այդ թվում.

ՇԽ անդամ Վ. Ենգիբարյանն առաջարկեց օրակարգի այլ հարցերում ընդգրկել ՇԽ անդամների

մասնակցության և կարգապահության հարցերը:

Նիստի նախագահող Ա. Տեր-Հովակիմյանն առաջարկեց օրակարգի այլ հարցերում քննարկել նաև նախկին ՇԽ անդամների հայտարարությունը՝ գյուղական ճանապարհների ենթածրագրի կասեցման կապակցությամբ:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյանն առաջարկեց այլ հարցերում քննարկել ՇԽ դիրքորոշումը հունիսի 10-ին կայացած ՀՄԿ տնօրենների խորհրդի որոշման կապակցությամբ (ծրագրի ճանապարհային բաղադրիչը կասեցնելու վերաբերյալ):

Հաշվի առնելով վերոնշյալ առաջարկությունները՝ օրակարգը հաստատվեց միաձայն հետևյալ ձևակերպմամբ.

1. 15:00 - Տեղեկատվության ներկայացում ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջընթացի արդյունքների վերաբերյալ  
Ձեկուցող՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյան
2. 15:30 - Տեղեկատվության ներկայացում՝ հունիսի 12-ին կայացած ԿԽ նիստի վերաբերյալ  
Ձեկուցող՝ ԿԽ անդամներ
3. 16:00 - Այլ հարցեր
  - ա) Քննարկում Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի՝ հունիսի 10-ին կայացած խորհրդի նիստի որոշման և ՀՄՀ-Հայաստան ծրագրի ներկա կարգավիճակի վերաբերյալ
  - բ) Նախկին ՇԽ անդամների հայտարարության քննարկում
  - գ) Տեղեկատվության ներկայացում ծրագրի իրականացման տեղամասեր այցելությունների արդյունքների վերաբերյալ
  - դ) ՇԽ կարգապահական հարցերի քննարկում

#### **Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ**

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյանը ներկայացրեց ծրագրի ներկա կարգավիճակը և առաջընթացը: Մեջբերելով հունիսի 10-ին կայացած ՀՄԿ խորհրդի նիստի հաղորդագրությանը՝ Ա. Հովսեփյանը խոսեց գյուղական ճանապարհների ծրագրի կասեցման արդյունքում առաջացած բացասական հետևանքների, դրանց մեղմացման հնարավոր ուղիների, ինչպես նաև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

Մյուս կողմից, Ա. Հովսեփյանը փաստեց, որ ոռոգման ծրագիրը իր ակտիվ հունով շարունակվում է. ներկայումս պոպուլյարացիների վերականգնման աշխատանքների մրցութային գործընթացը շարունակվում է, շուտով կհայտարարվի 4 ինքնահոս համակարգերի շինարարության մրցույթը (նախատեսված 7-ի փոխարեն), 27 համայնքների երրորդ կարգի ջրանցքների նախնական նախագծերը գտնվում են քննարկման փուլում, շարունակվում են աշխատանքները մայր ջրանցքների շինարարության ուղղությամբ:

Նիստի մասնակիցները հնարավորություն ունեցան իրենց հարցերն ուղղել ծրագրի տնօրենին, մասնավորապես,

Հարց - Ֆինանսավորման ի՞նչ նոր աղբյուրներ է առաջարկել Կառավարությունը՝ հաշվի առնելով ՀՀ նախկին նախագահ Ռ. Քոչարյանի՝ ծրագիրը ամբողջությամբ իրականացնելու խոստումը (Ս. Սեդրակյան):

Պատասխան – Քանի դեռ Հայաստանը պաշտոնական գրություն չի ստացել ենթածրագրի կասեցման վերաբերյալ, համապատասխան քայլեր, գործողություններ նոր ֆինանսական միջոցներ գնտելու ուղղությամբ չեն կարող իրականացվել:

Հ. - Այլ աղբյուրներից գումարներ հայթայթելու դեպքում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պետք է արդյո՞ք ստանա ՀՄԿ թույլտվությունը այդ գումարները տնօրինելու համար (Վ. Եմգիբարյան):

Պ. - Այո, քանի որ կան համատեղ աշխատանքը կազմակերպելու և համակարգելու մի շարք հարցեր, որոնց շուրջ պետք է ձեռք բերվեն համաձայնություններ:

Հ. – Հաշվարկվել է արդյո՞ք վերջերս դրամի արժևորման արդյունքում ավելացող միջոցների տնօրինման հարցը:

Պ.- Դեռ ՀՄՀ-Հայաստանը չի անդրադարձել այդ հարցին:

## Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ

Հունիսի 12-ին կայացած Կառավարման խորհրդի նիստին քննարկված հարցերը ներկայացրեց ԿԽ պատվիրակ Արման Ոսկանյանը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակներում յոթ ինքնահոս համակարգերի կառուցման մրցութային փաստաթղթերի վերաբերյալ ստացված ՀՄԿ առարկությունների նամակի քննարկում և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի՝ ինքնահոս համակարգերի կառուցման ընթացքի վերաբերյալ հետագա քայլերի հաստատում
2. ՀՄԿ-ին ներկայացվող 12-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում  
ա/ Հատկացման հայտ և Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,  
բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,  
գ/ Աշխատանքային պլան,  
դ/ Ամփոփ եռամսյակային հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ,  
ե/ Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան:
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակում ընդգրկված Արմավիրի և Թալինի մայր ջրանցքներում իրականացվող շինարարական աշխատանքների իրականացումը Համաշխարհային բանկին փոխանցելու և Վեց մայր ջրանցքների վերականգնման աշխատանքների երկրորդ փաթեթի մեջ ընդգրկված աշխատանքների նոր ծավալների վերաբերյալ ներկայացված տեղեկատվության քննարկում և հաստատում
4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակում նստվածաբանության, բետոնի և ջրի կառավարման մասնագետների կողմից ներկայացված հաշվետվությունների ներկայացում
5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի, Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածներ և Ջրից դեպի Շուկա բաղադրիչների գործընթացի որակական գնահատման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում (տեղեկանքը կցվում է):
6. Այլ հարցեր:

ՇԽ անդամները հարց բարձրացրեցին երեք ինքնահոս համակարգերի՝ Մեղրի, Սպիտակ և Հալավար, ծրագրից դուրս մնալու պատճառների վերաբերյալ:

Հարցը մեկնաբանեց Ա. Հովսեփյանը. նա նշեց, որ ինքնահոս համակարգերի՝ ծրագրից դուրս մնալու հիմնական պատճառ է եղել նախագծային և մի շարք տեխնիկական լուծումներ, որոնք եղել են թույլ (նախագծողի կողմից) և հանգեցրել են տնտեսական արդյունավետության ցածր ցուցանիշների: Այն մասին, որ Հայաստանում պակասում է միջազգային ստանդարտներին համապատասխանող փորձառությունը ոռոգման ոլորտում խոսվել է նաև ՇԽ նախորդ նիստերի ընթացքում. այնուամենայնիվ, հարցի այսպիսի հանգուցալուծումը ենթադրում է, որ եղել է նաև սուբյեկտիվ մոտեցում և կիրառվել են խստագույն պահանջներ:

Ծավալված քննարկման արդյունքում ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները՝

ՇԽ անդամ Վ. Ենգիբարյանն առաջարկեց առաջիկայում անցկացնել համաժողով նվիրված Հայաստանում գործող շինարարական ստանդարտներին: Հանդիպման արդյունքում հնարավոր կլինի ճշտել առկա խնդիրները և գտնել լուծումներ, ինչը թույլ կտա առաջիկայում խուսափել նման իրավիճակներից:

Առաջարկություն եղավ նաև նախաձեռնությամբ հանդես գալ և դիմել ՀՀ Կառավարությանը, ինչպես նաև ՀՀ Նախագահին առընթեր հանրային խորհրդին՝ պետական ծրագրերի առաջնահերթություններում ներառելու ՀՄՀ-Հայաստան ծրագրով նախատեսված, բայց չիրականացված երեք ինքնաքիս համակարգերի վերականգնման աշխատանքները:

ՇԽ անդամները միաձայն համաձայնություն տվեցին վերոնշյալ առաջարկություններին և

արձանագրվեցին հետևյալ իրականացման քայլերը՝

- հանձնարարել ԿԽ պատվիրակներին գրավոր առաջարկությամբ դիմել կառավարությանը պետական առաջահերթություն դիտարկելու Մեղրիի, Սպիտակի և Հալավարի ինքնահոս համակարգերի վերականգնումը.

- հանձնարարել ՇԽ օգնականին պատրաստել գրություն ՀՀ նախագահին առընթեր հանրային խորհրդին քննարկելու արդեն նախագծված Մեղրիի, Սպիտակի և Հալավարի ինքնահոս համակարգերի վերականգնման աշխատանքները և առաջարկել հնարավոր լուծումներ:

#### **Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ**

Այլ հարցերում ՇԽ անդամները քննարկեցին հերևյալ հարցերը՝

- **ՇԽ դիրքորոշումը ՀՄԿ խորհրդի որոշման կապակցությամբ՝ կասեցնելու ՀՄՀ-Հայաստան ծրագրի ճանապարհաչիմության բաղադրիչը.**

Այս հարցի կապակցությամբ ՇԽ անդամների կարծիքները բաժանվեցին երեք հիմնական մասի՝ առաջինը (Ա. Տեր-Հովակիմյան, Կ. Մովսիսյան, Թ. Աբրահամյան)՝ որ ՇԽ-ը պետք է հանդես գա համատեղ ուղերձով և արտահայտի իր մտահոգությունը, որ ծրագրի կասեցման պատճառով տուժելու են հասարակ շահառուները: Ուղերձը պետք է չպարունակի քաղաքական ենթատեքստ:

Երկրորդը (Վ. Ենգիբարյան, Ն. Մայիլյան)՝ այս պարագայում ՇԽ-ը ասելիք չունի, քանի որ հայտնի է, որ ծրագիրը կրում է քաղաքական բնույթ և խորհրդի որոշումը մասնակի կապված է եղել Հայաստանում վերջերս կայացած ընտրությունների հետ: Ի դեպ, Երևանի ավագանու ընտրության կապակցությամբ ՇԽ-ը արտահայտել է իր դիրքորոշումը և կոչ է արել քաղաքական ուժերին հավատարիմ մնալ թափանցիկ ընտրություններ անցկացնելու մոտեցմանը:

Չորրորդը (Ա. Ոսկանյան, Լ. Ասատրյան)՝ ՇԽ-ը պետք է քննարկի և հստակեցնի իր դիրքորոշումը, հասկանա, թե ինչ ուղերձ է ուզում հայտնել, որից հետո միայն հանդես գա որևէ հայտարարությամբ: Այս պարագայում կարելի է քննարկել հստակ ուղերձի բովանդակությունը, եթե այդպիսինը լինի:

Հաշվի առնելով, որ ՇԽ-ը չհանգեց միահամուռ կարծիքի՝ նախագահողն առաջարկեց հարցի քննարկումը հետաձգել կամ դաշտը բաց թողնել հնարավոր նախաձեռնությունների և առաջարկությունների համար:

- **ՇԽ դիրքորոշումը՝ նախկին ՇԽ անդամների կողմից արված հայտարարության կապակցությամբ**

ՇԽ անդամներից մեծամասնությունը կարծիք հայտնեցին, որ այն անկախ ուղերձ է և ՇԽ ներկա կազմը լիազորված չէ պաշտոնական կարծիք հայտնել դրա մասին:

- **ՇԽ անդամների մասնակցության և կարգապահության հարցեր**

ՇԽ անդամ Վ. Ենգիբարյանն առաջարկեց դիմել ՇԽ բոլոր անդամներին և կոչ անել պահպանել ՇԽ աշխատանքներին մասնակցելու կարգապահությունը՝ և՛ հաճախելու, և՛ ուշացումների առումներով: ՇԽ անդամները որոշեցին առաջիկա նիստին առաջին հարցով դիտարկել ՇԽ անդամների բացակայությունները և գործել համապատասխան ՇԽ Կանոնակարգի: ՇԽ օգնականին հանձնարարվեց տեղեկացնել խորհրդի բոլոր անդամներին որոշման վերաբերյալ:

- **Տեղեկատվության ներկայացում ծրագրի իրականացման տեղամասեր այցելությունների արդյունքների վերաբերյալ**

Առաջարկություն եղավ հարցի քննարկումը տեղավորել ՇԽ առաջիկա նիստի օրակարգ: Առարկություններ չեղան:

Նիստն ավարտվեց ժամը 17:00-ին:

*Նախագահող՝ Ա. Տեր-Հովակիմյան*

*Քարտուղար՝ Վ. Գրիգորյան*

*16-ը հունիսի, 2009թ.*